Այստեղ ինքը եւս հերոս է: Ինչ որ ճակատամարտի մէջ կարեւոր դեր է խաղացել եւ իր օգնականները իր մասին խօսելիս նոյն եռանդով են լեցուում, ինչպէս նա Դ'Անունցիոյի մասին խօսելիս:

Իտալացին միշտ էլ մի բանով խանդավառուած է: Երէկ Գարիբալդին էր, Մացինին, Կաւուրը, Վերդին, Նկարչութիւնը, արուեստը, անցեալը, ապագան, պատերազմը, այսօր՝ Դ'Անունցիոն, Մուսոլինին, մեծ Իտալիան:

Իմաստուն խանդավառութեան հոյակապ երկիրն է, որի արուեստը իր հողի հարստութիւնից է բխում:

Գոեհիկ մարդը Իտալիոյ մասին խօսելիս ամերիկացու ակնոցներ է դնում: Նրա ներքին, հոգեկան առաքինութիւնները մնում են օտար, նրա թաքնուած մեղեդին անհարազատ:

Իտալիան գերազանցապէս ժողովուրդ է եւ համաշխարհային, հող է եւ ոչ նիւթ:

Ահա ինչու ե՛ւ նաւապետը ե՛ւ իր օգնականները ե՛ւ նաւաստիները այդքան բնական են եւ ծովին խիստ հարազատ:

Ամէն տեղ նոյնանման են: Ոչ իբրեւ հակադիր տիպ, ինչպէս անգլիացիները, այլ համաշխարհային գիտակցութեան համակրանքով:

Հոմը օտարական բառը չէր ճանաչում, այլ բարբարոսը. նա պաշտում էր բոլոր երկիրների աստուածներին եւ civis romanus–ը ամենին մատչելի էր: Այսօր էլ Իտալիան լոկ մայրութիւն է, ուրոյն աշխարհազգացում եւ ոչ սահմանների մէջ փակուած բռնի ուժ, եւ ա՛յդ, չնայած Սավոյիայի Տան բերած եւրոպական բոլոր նախապաշարումներին, չնայած նախարարների բոլոր ճառերին:

Իտալիան գերազանցապէս հակաեւրոպա է եւ հակասլաւոնական: Թո՛ղ ռուսերը ինչքան ուզում են մնքան մեռնող աշխարհների իրենց համադրութեան մէջ՝ Եւրասիայի գաղափարականութիւնը մէջտեղ նետելով. ապագան Իտալարեւելքինն է՝ արեւային մշակոյթների, հականորդիկ, կեղրոնաձիգ համադրութեան:

Այդ գաղափարները անցնում են գլխիս մէջ, մինչ դիտում եմ յատկանշական մի տեսարան:

Նաւաստիներին մօտեցել է մի հայ մարդ, պարզուկ եւ խեղճ, եւ ձեռքի շարժումներով, կոտրտուած ֆրանսերէնով, մի ինչ որ բան է պատմում եւ հեռուն ցոյց տալիս: Նաւաստիները ամենամեծ ուշադրութեամբ լսում են նրան, նայում են մարդկային, բարի նայուածքով եւ աշխատում են հասկանալ: Հայը տաքանում է, նաւաստիների ուշադրութիւնը աւելի է լարում: Եւ այդպէս երկար ժամանակ:

Վերջ ի վերջոյ, մարդը հեռանում է, եւ նաւաստիներից մէկը, մտահոգ խօսքը ինձ ուղղելով բացականչում է.

— Chi sa chedice... Ո՞վ է իմանում ի՞նչ է ասում:

Չէին հասկանում, բայց համբերատար լսում էին:

* * *

Նաւը գրեթէ ամբողջովին լեցուած է հայերով:

Կան վերադարձողներ, կան նոր գնացողներ:

Էն վերը, առաջի կարգում, մի վարդապետ, գնում է շտապ եպիսկոպոսանալու: Պիտի վերադառնայ Պոլիս եւ, ասում են, Պատրիարքի պաշտօնը պիտի վարէ: Բարձրահասակ, շարժուն, կենսուրախ՝ կարծես ոչինչ չի պատահել՝ մօրուքը գոհունակութեամբ շոյող մի վարդապետ է: Նաւ մտնելու օրից չի երեւում, ոչ ոքի հետ չի խօսում: Նրան հարեւան է մի երիտասարդ թուրք սպայ, որ ինձ ներկայացրին ինչպէս նոր սպաննուած Ջեմալ փաշայի սպաներից մէկը: Գնում է Կովկաս, եւ նա էլ այլեւս չի երեւում:

Երկրորդ կարգում մեծ մասամբ նախկին մարդիկ են եւ սովետական պաշտօնեաներ: Ամէնքն էլ վաճառականներ: Ոմանք իրենց բախտը փորձեցին Պոլսում՝ օղի ծախելով, բորսայում խաղալով, բայց ինչպէս երեւում է անյաջող: Այժմ գնում են Կովկասը վերաշինելու: Հայաստանի մասին խօսք չեն անում եւ առհասարակ քիչ են խօսում: Նոր հնարաւորութիւնների հոտ են առել ոսկիների չուրջ մութ խաղեր են նախագծում: Հողերի տակ փորուած արժէքներ կան եւ սահմաններից ուրուականներ են անցնում:

Կոմբինացիաներ...

Վարը, չի հասկացւում, շատ խառն ի խուռն է:

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան